

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՎԱՍԻԼՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳԻ**

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (1988-1991 ԹԹ.)**

**Է.00.02.-«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»  
մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

պ. գ. դ.,  
Մ.Ա. Մուրադյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պ. գ. դ., պրոֆեսոր Է.  
Գ. Մինասյան  
պ. գ. թ., դոցենտ  
Մ.Ե. Վարդազարյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հուլիսի 8-ին, ժ. 15:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՂ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղնագիրն առաքված է 2016 թ. հունիսի 7-ին

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար

պ. գ. թ. Գ.Ա. Մարգարյան

## ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շուրջ մեկ դար է անցել, երբ խորհրդային իշխանությունների անարդարացի քաղաքականության դրսևորման հետևանքով Արցախը անօրինական կերպով բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին: Արդյունքում խորհրդային իշխանությունների մեղքով ծագած հիմնախնդիրը, արդարացի լուծում չստանալով, շարունակում է իր ազդեցությունը թողնել ոչ միայն հայ-ադրբեջանական հարաբերությունների, ոչ միայն Հարավային Կովկասի քաղաքական գործընթացների, այլև աշխարհաքաղաքական բարդ գործընթացների վրա: Խորհրդային իշխանությունների քաղաքականությունը արցախյան հիմնահարցի վերաբերյալ (1988-1991 թթ.) պատմության ուսումնասիրությունը չի կորցրել ոչ միայն իր արդիականությունը, այլև խիստ անհրաժեշտ է, որպեսզի ոչ միայն հակամարտող կողմերը, այլև արցախյան հակամարտության կարգավորման գործով զբաղվող շահագրգիռ հանձնաժողովները և կազմակերպությունները իրենց ձեռքում ունեման ուսումնասիրություններ, որոնք հնարավորություն կընձեռեն արցախյան հակամարտության կարգավորման ուղիներ որոնել: ԽՍՀՄ փլուզումից հետո Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին նվիրված քննարկումներն ու դրա լուծման ուղիների որոշումները ստացան միջազգային բնույթ: Ղարաբաղյան հիմնահարցի դինամիկան իրական ընկալելու համար փորձ է կատարվել ուսումնասիրելու խորհրդային կուսակցական-պետական մարմինների ընդունած որոշումները 1988-1991 թթ.:

Կարևոր է փաստել, որ ապօրինի բռնակցվելուց ի վեր արցախահայությունը շուրջ 70 տարի անընդհատ բողոքել է դրա դեմ և պահանջել է միավորվել Մայր հայրենիքի հետ, քանի որ միայն բավարարվել ինքնավար մարզի իրավա-քաղաքական կարգավիճակով, ինչպես ցույց տվեց պատմության ողջ հետագա ընթացքը, չէր կարող ընդունել և հաշտվել ոչ միայն արցախահայությունը, այլև ողջ հայությունը: Սակայն խորհրդային կուսակցական-պետական մարմինները մերժել էին նրանց արդարացի պահանջը: Հարկ է նշել, որ 1945 թ. նոյեմբերին Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը նամակով դիմել էր Ի. Ստալինին Լեռնային Ղարաբաղը Հայաստանի կազմում ընդգրկելու մասին<sup>1</sup>: Հետագայում Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը երբեք էլ չի հաշտվել ադրբեջանական իշխանության հետ, և այդ իշխանությունից ազատագրվելու հիմնախնդիրը դրվել է նաև Ն.Ս. Խրուշչովի, Լ.Ի. Բրեժնևի և Մ.Ս. Գորբաչովի օրոք<sup>2</sup>: Գորբաչովյան «վերակառուցման» քաղաքականությունը նպաստեց արցախահայության բացահայտ պայքարի ծավալմանը, արդրբեջանական բռնատիրությունից նրա ազատագրումը դարձավ օրակարգի հարց:

Սույն ատենախոսությունը առաջին ամբողջական-համալիր փորձն է քննական ներկայացնելու ԽՍՀՄ կուսակցական-պետական մարմինների որոշումները արցախյան հիմնահարցի վերաբերյալ: Փաստաթղթերի

<sup>1</sup> Հայության պայքարը ԼՂԻՍ-ը խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կ. Խաչատրյան, Հ. Աբրահամյան, Երևան, 2011, էջ 36-37:

<sup>2</sup> Ступишин В., Карабахский конфликт. 1992-1994, Москва, 1998, стр. 23.

համադրման և քննական վերլուծության շնորհիվ պատմության իրական գնահատականի է արժանանում վերակառուցման քաղաքականության «հեղինակ» Մ. Գորբաչովը, որը իր գործընկերների հետ միասին չհամարձակվեց լուծում տալ խորհրդային Միությունում ակնհայտորեն զոյություն ունեցող ազգային հիմնախնդիրներին: Արդյունքում խորհրդային կայսերապետության փլուզման գլխավոր պատճառներից մեկն էլ հանդիսացավ խորհրդային ղեկավարության վարած անհեռատես ազգային քաղաքականությունը: Այսպիսով թեմայի հետազոտման արդիականությունն ունի ոչ միայն գիտատեսական, այնպես էլ գործնական ու ճանաչողական նշանակություն:

### **ԱՏԵՆԱԽՈՍԻԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Չետագոտության մեջ արժևորելով ուսումնասիրվող ժամանակաշրջանի հիմնահարցերին վերաբերող գիտական առաջին ձեռքբերումները՝ հատուկ ուշադրություն է դարձվել այն հիմնախնդիրների վրա, որոնք պատմա-հրապարակախոսական գրականության մեջ կամ թերի են ուսումնասիրվել, կամ էլ դուրս են մնացել հետազոտողների ուշադրությունից: Հենվելով արխիվային փաստաթղթերի, փաստագրական ժողովածուների, վիճակագրական տվյալների, պաշտոնական և ոչ պաշտոնական պարբերական մամուլի, ժամանակակիցների հրապարակած հուշագրությունների և այլ նյութերի վրա՝ նպատակ է դրվել բազմակողմանի ուսումնասիրել և գիտականորեն ընդհանրացնել ԽՍՀՄ պետական-կուսակցական մարմինների որոշումները արցախյան հիմնախնդրում:

Այս կապակցությամբ ատենախոսը իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

★ Լուսաբանել «վերակառուցման» քաղաքականության ընթացքը ԽՍՀՄ-ում, ներկայացնել ԽՍՀՄ կազմալուծման սկիզբը և արցախյան շարժման սկզբնավորումը: Ցույց տալ խորհրդային ղեկավարության կողմից 1988 թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ մարզխորհրդի ժողովողական պատգամավորների որոշմանը տրված գնահատականի սնանկությունը:

★ Վեր հանել ԽՍՀՄ ղեկավարության վարած խուսանավման քաղաքականությունը: Ուսումնասիրել «կենտրոնի» կողմից ազգային քաղաքականության հետագա ուղղվածության ճշտման փորձերը՝ մատնանշելով դրանց անհեռատեսությունը: Ներկայացնել Մ. Գորբաչովի փորձերը լուծելու արցախյան հիմնահարցը ի հաշիվ սոցիալ-տնտեսական միջոցառումների:

★ Քննության ենթարկել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի նիստի որոշումը, ցույց տալ «կենտրոնի» մշակած խորհրդային երկրի ազգային-պետական սահմանների անքակտելիությունը պահպանելու հայեցակարգը:

★ Ներկայացնել 1989 թ. հունվարի 12-ի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում կառավարման հատուկ ձև մտցնելու մասին» հրամանագիրը, լուսաբանել Մ. Գորբաչովի նոր մարտավարությունը արցախյան հիմնահարցում:

★ Ցույց տալ խորհրդային ղեկավարության քաղաքականության հակաարցախյան ուղղվածության ընդլայնումը, լուսաբանել 1989 թ. նոյեմբերի 28-ի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի «Լեռնային Ղարաբաղի մարզում իրադրությունը նորմալացնող միջոցառումների մասին» որոշումը, ներկայացնել Ադրբեջանում ապրող հայերի հետագա ճակատագիրը:

★ Ներկայացնել Մ. Գորբաչովի հուսահատ քայլերը ԽՍՀՄ-ը պահպանելու համար, վեր հանել «Օղակ» պատժիչ գործողության բուն

նպատակները, զնահատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը և լուսաբանել խորհրդային կայսերապետության փլուզման ավարտը:

### **ԱՏԵՆԱԽՈՒՄԻԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ**

Արցախյան հիմնախնդրի պատմությանը մվիրված հրատարակվել են բազմաթիվ գիտական աշխատություններ, որոնցում լուսաբանվել են կարևորագույն հիմնախնդիրներ: Սակայն հարկ է նշել, որ քննվող փուլի պատմությունը համապատասխան հարցապնդումով դեռևս հատուկ գիտական ուսումնասիրության առարկա չի դարձել: Այն 1988-1991 թթ. ԽՍՀՄ պետական և կուսակցական մարմինների արցախյան հիմնահարցի վերաբերյալ ընդունած որոշումների ամբողջական հետազոտման առաջին փորձն է: Ատենախոսությունում հերթականությամբ ներկայացվում է արցախյան հիմնահարցի փուլերը, լուսաբանվում է խորհրդային իշխանությունների ձեռնարկած միջոցառումները վերևից լուծելու արցախյան հիմնահարցը, բացահայտվում են այդ որոշումների իրական նպատակները: Ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում մերկացնելու խորհրդային կուսակցական-պետական մարմինների ընդունած որոշումների սնանկությունը:

Լուսաբանվող թեմայի վերաբերյալ հրատարակված արխիվային նյութերի, պատմական ու ժամանակակից աղբյուրների և աշխատությունների ուսումնասիրության հիման վրա առաջին անգամ փորձ է արվել ամբողջական վերլուծության ենթարկել խորհրդային միության կուսակցական-պետական մարմինների քաղաքականությունը արցախյան հիմնահարցում:

Այսպիսով փորձ է արվել վերլուծել և զնահատական տալ խորհրդային բարձրաստիճան պետական-կուսակցական մարմինների 1988-1991 թթ. ընդունած արցախյան հիմնահարցի վերաբերյալ որոշումներին:

### **ԱՏԵՆԱԽՈՒՄԻԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ**

Ժամանակագրական առումով ատենախոսությունը ընդգրկում է 1985-1991 թվականները: Այսինքն՝ ԽՍՀՄ-ում «վերակառուցման» քաղաքականության հռչակման փուլից, 1988 թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ-ի ժողպատգամավորների մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի ընդունած պատմական որոշումից մինչև Լեռնային Ղարաբաղի (Արցախի) անկախության հռչակումը և ԽՍՀՄ-ի փլուզումը:

Նման մոտեցումը թույլ է տվել ամբողջությամբ հետազոտել նշված ժամանակաշրջանում խորհրդային բարձրաստիճան կուսակցական-պետական մարմինների քաղաքականությունը արցախյան հիմնահարցում:

### **ԱՏԵՆԱԽՈՒՄԻԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ**

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած է հիմնահարցի բազմակողմանի և առարկայական հետազոտման սկզբունքը: Օգտագործվել է պատմաքննական մեթոդով դեպքերն ու դեմքերը կոնկրետ ժամանակահատվածում և կոնկրետ պայմաններում զնահատելու, առաջադրված խնդիրները հիմնավորելու նպատակով տարբեր սկզբնաղբյուրներ ու փաստեր համեմատական քննությամբ օգտագործելու սկզբունքը: Պետական և կուսակցական ամեն մի փաստաթուղթ վերլուծելու ժամանակ, իրական վիճակը պարզելու նպատակով համադրվել է և հավաստի փաստերը:

### **ԱՏԵՆԱԽՈՒՄԻԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ատենախոսությունը ունի գիտագործնական և պատմաճանաչողական նշանակություն: Այն կարող է օգտական լինել Հայաստանի Հանրապետության նորագույն շրջանի պատմության և Արցախի ազատագրման պայքարի ուսումնասիրման համար: Ուսումնասիրության մեջ արժարժված բազում հարցեր կարող են դառնալ առանձին հետազոտությունների առարկա: Օգտագործված փաստաթղթերը և հեղինակի անհատական դիտողությունները հերքում են ադրբեջանական ու թուրքական կեղծարարների կողմից բերված անհիմն մեկնաբանությունները արցախյան հիմնահարցի վերաբերյալ: Բացի այդ դրանք հնարավորություն են տալիս ապագա քաղաքական գործիչներին խորամուխ լինելու ԽՍՀՄ-ի փլուզման ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձություններում:

### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Պատմության ֆակուլտետի խորհրդում, քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Պատմության ֆակուլտետի «Հայաստանի հարակից երկրների պատմության» ամբիոնի նիստում:

### **ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Ատենախոսությունը գրվել է հայերեն, ռուսերեն լեզուներով գրված աղբյուրների և տարաբնույթ հետազոտությունների ուսումնասիրության հիման վրա: Աշխատության աղբյուրագիտական հիմքը կազմում են Հայաստանի Ազգային արխիվում պահվող փաստաթղթերը Հայկոմկուսի կենտկոմի, շրջկոմների բյուրոների և պլենումների որոշումները, Երևանում և Հանրապետության այլ բնակավայրերում տեղի ունեցած հանրահավաքներում ելույթների սղագրությունները<sup>3</sup>:

Թեմայի լուսաբանման համար կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունեն «Սովետական Միության կոմունիստական կուսակցության 27-րդ համագումարի նյութերը», «Սովետական Միության կոմունիստական կուսակցության XIX համամիութենական կոնֆերանսի նյութերը» փաստագրական ժողովածուները<sup>4</sup>:

Արցախյան հիմնահարցի լուսաբանման համար մեծ նշանակություն ունի ակադեմիկոս Վարդգես Միքայելյանի խմբագրությամբ լույս տեսած փաստաթղթերի և նյութերի ժողովածուն, որտեղ հեղինակի գրած պատմական ակնարկում հանգամանորեն խոսվում է Արցախի հիմնահարցի մասին և տրվում են լուրջ գիտական եզրակացություններ<sup>5</sup>:

Աղբյուրագիտական առանձնակի նշանակություն ունի Վահան Հարությունյանի կազմած ժամանակագրական ստվարածավալ ժողովածուն<sup>6</sup>, որում ընդգրկված են 1988-1997 թթ. Արցախի հիմնախնդրի վերաբերյալ մամուլում հրատարակված բազմաթիվ աղբյուրագիտական նյութեր:

<sup>3</sup> Տես՝ ՀԱԱ \$ 1, գ. 82, 83, 84, 87, \$ 1159, գ. 1, գ. 2:

<sup>4</sup> Տես՝ Սովետական Միության կոմունիստական կուսակցության 27-րդ համագումարի նյութերը, Երևան, 1986: Սովետական Միության կոմունիստական կուսակցության XIX համամիութենական կոնֆերանսի նյութերը, Երևան, 1988:

<sup>5</sup> Տես՝ Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов. Отв. ред. Микаелян В., Ереван, 1992.

<sup>6</sup> Տես՝ Арутюнян В., События в Нагорном Карабахе, ч. 1-6, Ереван, 1990-1997.

Բավականին նյութեր, խեղաթյուրելու նպատակով Լեռնային Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարը, տպագրվեցին նաև Բաքվում<sup>7</sup>: Ի պատասխան այդ խեղաթյուրված նյութերի, հայ հեղինակների կողմից կազմվեց ժողովածու<sup>8</sup>, որտեղ խոսվում էր Արցախի հիմնահարցի մասին և տրվում էին լրջմիտ եզրակացություններ:

Արժեքավոր աղբյուրագիտական նշանակություն ունեցող աշխատությունն է Ս. Ջոլյանի և Յ. Միրզոյանի երկու մասից կազմված ժողովածուն<sup>9</sup>: Հեղինակները մանրակրկիտ կերպով հորհրդային Միության պաշտոնական և ոչ պաշտոնական մամուլում Լեռնային Ղարաբաղի իրադարձություններին նվիրված հրապարակումները ամբողջացրել են նշված ժողովածուում:

Բացառիկ աղբյուրագիտական նշանակություն ունեցող «Արցախյան գոյապայքարի տարեգրություն» օրագրային բնույթ կրող գրքում Բագրատ Ուլուբաբյանը ներկայացնում է Արցախում և նրա շուրջ 1988 թ. փետրվարի 20-ից մինչև 1994 թ. մայիսի հրադադարը տեղի ունեցած իրադարձությունները, համակարգված ու ընդհանրացված տեղեկություններ է հաղորդում խնդրո առարկա թեմայի վերաբերյալ<sup>10</sup>:

Առանձնահատուկ աղբյուրագիտական նշանակություն ունի Ս.Ա. Համբարձումյանի հուշագրությունը<sup>11</sup>, որը լուսաբանում է 1988 թ. փետրվարից մինչև 1991 թ. խորհրդային ղեկավարության գործելակերպը արցախյան հիմնահարցում:

Բացառիկ մեծ աղբյուրագիտական նշանակություն ունի նաև Յ. Այվազյանի «Արցախյան ճգնաժամը»<sup>12</sup> աշխատությունը: Հեղինակը փորձել է արցախյան հիմնահարցով զբաղվող ուսումնասիրողներին տրամադրել խորհրդային կենտրոնական լրատվամիջոցներում տպագրված փաստացի նյութերը:

Սեզ հետաքրքրող հիմնահարցի վերաբերյալ խոշոր աղբյուրագիտական արժեք ունի Կ. Խաչատրյանի և Յ. Աբրահամյանի կազմած փաստաթղթերի ժողովածուն<sup>13</sup>:

խորհրդային Միության առաջին և վերջին նախագահը՝ Միխայիլ Սերգեևիչ Գորբաչովը, ԽՍՀՄ փլուզումից հետո փորձ է կատարել իր մտորումները ներկայացնել լայն հասարակությանը՝ «Կյանքը և բարեփոխումները» երկհատորանոց գրքում<sup>14</sup>: Աշխատությունը ունի աղբյուրագիտական նշանակություն, քանի որ հնարավորություն է ընձեռում

<sup>7</sup> Stu` Нагорный Карабах: разум победит, Баку, 1989. К истории образования Нагорного-Карабахской области Азербайджанской ССР 1918-1925, документы и материалы, Баку, 1989.

<sup>8</sup> Stu` Азербайджанская аргументация и ее опровержение, Ереван, 1991.

<sup>9</sup> Stu` Глазами независимых наблюдателей. Нагорный Карабах и вокруг него. Сборник материалов. Ереван, 1990. Нагорный Карабах и вокруг него. Глазами независимых наблюдателей, Ереван, 1991.

<sup>10</sup> Stu` Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997:

<sup>11</sup> Stu` Амбарцумян С., Три года на пределе любви и смерти, Ереван, 2005.

<sup>12</sup> Stu` Айвазян В., Карабахский кризис, Москва, 2011.

<sup>13</sup> Stu` Հայության պայքարը ԼՂԻՄ-ը խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Խմբ. Խաչատրյան Կ., Աբրահամյան Յ., Երևան, 2011:

<sup>14</sup> Stu` Горбачев М., Жизнь и реформы. Книга I, Москва, 1995. Горбачев М., Жизнь и реформы. Книга II, Москва, 1997.

ուսումնասիրողին ծանոթանալու խորհրդային Միության կուսակցական-պետական ղեկավարի անմիջական գնահատականների հետ, որոնք տրված են արցախյան հիմնահարցի վերաբերյալ:

Վերը նշված աշխատությանը հաջորդում է Ռուսաստանի առաջին նախագահ Բ. Ելցինի հուշերը<sup>15</sup>: Բ. Ելցինի աշխատությունները բացահայտում են որոշ քաղաքական իրադարձությունների իրական պատկերները: Այդ փաստը հնարավորություն է ընձեռում համադրելու երկու քաղաքական գործիչների գնահատականները այս կամ այն իրադարձության մասին: Խորհրդային կուսակցական-պետական մարմինների որոշումների ուսումնասիրության համար կարևոր աղբյուրագիտական նյութ են պարունակում «Պրավդա» և «Իզվեստիա» թերթերը, որոնք այն ժամանակ հանդիսանում էին ԽՍՀՄ գլխավոր պետական, պաշտոնական զանգվածային լրատվության միջոցները, որտեղ տպագրվում էին խորհրդային ղեկավարության ընդունած որոշումները<sup>16</sup>:

Հատկապես կարևորվել է ԽՍՀՄ Կենտկոմի կողմից իրապարակվող «Известия ЦК КПСС» ամսագրի աղբյուրագիտական նշանակությունը հիմնահարցի լուսաբանման համար<sup>17</sup>:

Բացառիկ աղբյուրագիտական նշանակություն ունի «Ռոդինա» ամսագրում<sup>18</sup> տպագրված ԽՍՀՄ Կենտկոմի Քաղբյուրոյի 1988 թ. փետրվարի 29-ին կայացած նիստի արձանագրության նյութերը:

Լայնորեն օգտագործվել են ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ խորհրդային և հետխորհրդային մամուլում տեղ գտած բազմաթիվ իրապարակումներ<sup>19</sup>:

Բացի պաշտոնական մամուլի իրապարակումներից մեծ տեղ է հատկացվել նաև ոչ պաշտոնական, այլախոհ մամուլի իրապարակումներին: Հատկապես «Դեմոկրատիչեսկայա Ռոսսիյա» և «Նեզավիսիմայա զագետա» շաբաթաթերթերը և «Ֆենիքս», «Վեկ XX-ի Միր» ամսագրերը, ունեն ոչ միայն աղբյուրագիտական կարևոր դեր, այլև նրանցում տպագրված հոդվածները օգնում են հակադիր տեսանկյունից ընկալելու խորհրդային ղեկավարության ընդունած որոշումները<sup>20</sup>:

Արցախյան պայքարի առաջին տարում 1988 թ. ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիան Գ. Գալոյանի և Կ. Խուղավերոյանի խմբագրությամբ իրատարակեց «Լեռնային Ղարաբաղ» պատմական տեղեկանք գրքույկը<sup>21</sup>: Դրանում հիմնավորված է արցախյան հիմնախնդիրն ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա լուծելու անհրաժեշտությունը:

---

<sup>15</sup> Stu` Ельцин Б., Исповедь на заданную тему, Москва, 1990. Ельцин Б., Записки президента, Москва, 1994.

<sup>16</sup> Stu` Правда, Известия, 1988-1991.

<sup>17</sup> Stu` Известия ЦК КПСС, 1989-1991.

<sup>18</sup> Stu` Журнал Родина, N4, 1994.

<sup>19</sup> Stu` Խորհրդային Հայաստան, Ավանգարդ, Երեկոյան Երևան, Կոմունիստ, Голос Армении, Бакинский рабочий, Ուրբաթ, Խորհրդային Ղարաբաղ, Московские новости, Ազատ Արցախ, Դրոշակ, Огонек և այլն:

<sup>20</sup> Stu` Демократическая Россия, Независимая газета 1990-1991, Феникс, Век XX и Мир.

<sup>21</sup> Stu` Нагорный Карабах. Историческая справка, Ереван, 1988.



Արցախի ազատամարտի պատմությունը շարադրելու գործում մեծ արժեք է ներկայացնում Բ. Ուլուբաբյանի «Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» և «Արցախյան գոյապայքարը» աշխատությունները<sup>22</sup>:

Արցախյան հիմնահարցը միջազգային իրավունքի տեսանկյունից դիտարկելու ուղղությամբ առաջին լուրջ փորձն արեց Յուրի Բարսեղովը<sup>23</sup>: Նա ազգերի ինքնորոշման իրավունքը հիմնավորված հակադրեց տարածքային ամբողջականության խնդրին:

Արցախյան գոյապայքարի արդարացիությունը գիտականորեն հիմնավորելու առաջին հեղինակներից է Վլադիմիր Խոջաբեկյանը<sup>24</sup>: Իր աշխատության վերջում Վ. Խոջաբեկյանը «կենտրոնի» ընդունած որոշումները արցախյան հիմնահարցի վերաբերյալ համեմատել է բռնության շղթայի իրար հաջորդած օղակների հետ, որոնք ավելի ու ավելի սաստկացրին արցախյան շարժումը:

Արցախյան հակամարտությանն է նվիրված Նան Նիկոլայ Յովհաննիսյանի աշխատությունը<sup>25</sup>: Յեղիմակը փորձում է բացահայտել էթնիկ-քաղաքական հակամարտությունների ծագման իրական պատճառները: Աշխատությունում հիմնականում օգտագործվել են օտար աղբյուրներ, որոնք օգնում են ստեղծել անկողմնակալ, անաչառ գիտական հետազոտություն նվիրված արցախյան հակամարտության ուսումնասիրմանը:

Արցախյան հիմնահարցին նվիրված բազմաթիվ հրատարակված տարաբնույթ ուսումնասիրությունների ամփոփումն է ակադեմիկոս Գրիգոր Ավագյանի «Լեռնային Ղարաբաղ» աշխատությունը<sup>26</sup>:

ԽՍՀՄ-ում վերակառուցման քաղաքականության ուսումնասիրմանն է նվիրված Յ. Աբրահամյանի աշխատությունը<sup>27</sup>: Աշխատանքում ցույց են տրված խորհրդային համակարգի ճգնաժամի պատճառները, գորբաչովյան վերակառուցման քաղաքականության այն քայլերը, որոնք ուղղված էին հասարակության դեմոկրատացմանը, հրապարակայնությանը, բազմակարծության ձևավորմանը: Աշխատանքում հանգամանորեն վեր են լուծված ԽՍՀՄ փլուզման պատճառները:

Հայաստանում վերակառուցումից մինչև անկախություն ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների վերլուծությանն է նվիրված Ռուբեն Ազիզբեկյանի աշխատությունը<sup>28</sup>:

---

<sup>22</sup> Տես՝ Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, Արցախյան գոյապայքարը, Երևան, 1994: Նույնի, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997:

<sup>23</sup> Տես՝ Барсегов Ю., Право на самоопределение-основа демократического решения межнациональных проблем. К проблеме Нагорного Карабаха, Ереван, 1989, его же, Самоопределение и территориальная целостность, Москва, 1993. Его же, Народ Нагорного Карабаха субъект права на самоопределение, Москва, 1993.

<sup>24</sup> Տես՝ Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Երևան, 1991:

<sup>25</sup> Տես՝ Оганесян Н., Карабахский конфликт. Этапы, подходы, варианты решения, Ереван, 1997.

<sup>26</sup> Տես՝ Авагян Г., Нагорный Карабах. Ответ фальсификаторам, Ереван, 1991.

<sup>27</sup> Տես՝ Աբրահամյան Յ., Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը 1945-2011 թթ., Երևան, 2011:

<sup>28</sup> Տես՝ Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն: Համառոտ ակնարկ, Երևան, 1992:

Արցախյան գոյապայքարի առաջին շրջանում հրատարակված էսիկար Բարսեղյանի «Ճշմարտությունը թանկ է...»<sup>29</sup> գրքում զետեղված են մամուլում տպագրված նրա ավելի քան տասը հոդվածներ և մի քանի տասնյակ փաստաթղթեր, որոնցում գնահատվել են Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին նվիրված բազմաթիվ հարցեր ու մեկնաբանություններ:

Սերգեյ Չորանյանի կազմած փաստագրական ժողովածուն ու պատմագիտական աշխատությունը<sup>30</sup> ներկայացնում են արցախահայության նկատմամբ Ադրբեջանում նախապես ծրագրված ու իրագործված վանդալիզմը:

Ուշագրավ է Անդրանիկ Արշակյանի «Արցախյան գոյապայքարը (1985-1992 թթ.)» մենագրությունը<sup>31</sup>: Հեղինակը խորհրդային ղեկավար մարմինների ընդունած քաղաքական որոշումները Արցախի հիմնահարցի վերաբերյալ գնահատել է որպես հապշտապ և օրապակաս որոշումներ, որոնք էլ ավելի բարդացրեցին հայ-ադրբեջանական հարաբերությունները:

Արցախ-Ղարաբաղի հիմնահարցի ակունքների բացահայտմանն ու վերլուծությանը, Արցախում տեղի ունեցած պատերազմական զործողությունների նկարագրությանը և այդ պատերազմում հայ ժողովրդի հերոսական պայքարին են նվիրված Հրանտ Աբրահամյանի մի շարք աշխատություններ<sup>32</sup>, որոնցում արխիվային հարուստ նյութերի, մամուլում ու գիտական հանդեսներում հրապարակված բազմաթիվ հոդվածների, ինչպես նաև տպագրված աշխատությունների հիման վրա վերլուծվել են սույն ուսումնասիրությանն առնչվող բազմաթիվ կնճռոտ հարցեր:

Բավականին արժեքավոր է նաև Դոնի-Ռոստով քաղաքում լույս տեսած ԽՍՀՄ ՆԳ նախարարության նախկին սպա Վիկտոր Կրիվոպուսկովի «Խռովահույզ Ղարաբաղը» օրագրային գիրքը<sup>33</sup>: Հեղինակը փորձել է իր աշխատության մեջ ներկայացնել խորհրդային ղեկավարության քաղաքական առունձվ անհեռատես քայլերի նշանակությունը արցախյան հիմնահարցում:

Պակաս արժեքավոր չէ նաև 1992 թ. Սանկտ-Պետերբուրգում հրատարակված Իգոր Բաբանովի և Կոնստանտին Վոյեվոդսկու «Ղարաբաղյան ճգնաժամ» գիրքը<sup>34</sup>: Հեղինակներն, օգտվելով բազմաթիվ աղբյուրներից կարողացել են ճիշտ ընկալել Արցախյան պայքարի արդարացիությունը և խորհրդային հասարակայնությանը ապացուցել այդ պայքարը հաղթանակով ավարտելու կարևորությունը:

Հայտնի է, որ Ադրբեջանի իշխանությունները որդեգրել էին ադրբեջանահայության նկատմամբ իրագործված բռնագաղթեցման պետական քաղաքականություն: Այդ ամենը արտացոլված է Հ.

<sup>29</sup> Տես՝ Барсегян Х., Истина дороже...К проблеме Нагорного Карабаха-Арцаха, Ереван, 1992.

<sup>30</sup> Տես՝ Чобанян С., Государственно-организованный терроризм, SOS! Геноцид армян 1988-1992 гг., Ереван, 1992. Чобанян С., Государственная и национальная политика Азербайджана, Ереван, 1993.

<sup>31</sup> Տես՝ Արշակյան Ա., Արցախյան գոյապայքարը (1985-1992թթ.), Երևան, 2004:

<sup>32</sup> Տես՝ Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, Երևան, 1991: Նույնի, Երբ Հայրենիքը վտանգի մեջ է, Երևան, 1997: Նույնի, Ճակատագրին ընդառաջ, Երևան, 2001, Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Բ (1985-2000), Ստեփանակերտ, 2007:

<sup>33</sup> Տես՝ Кривоусков В., Мятажный Карабах. Из дневника офицера МВД СССР, Ростов-на Дону, 2003.

<sup>34</sup> Տես՝ Бабанов И., Воеводский К., Карабахский кризис, Санкт-Петербург, 1992.

Ուլուբաբյանի, Ս. Ձոլյանի, Ա. Արշակյանի և Ի. Արաբյանի աշխատություններում<sup>35</sup>:

Ս. Չալյանի «Արցախյան շարժման լուսաբանումը ԱՄՆ-ի հայկական անգլոլեզու մամուլում» ուսումնասիրությունը<sup>36</sup> ներկայացնում է ԱՄՆ-ում հայկական մամուլի տեսակետները նվիրված արցախյան հիմնահարցին:

Բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Գ. Մարտիրոսյանի «Գորբաչովը և Լեռնային Ղարաբաղի ողբերգությունը» աշխատությունը<sup>37</sup>: Յեղիմակը մեծաքանակ փաստական նյութերի հիման վրա փորձում է ներկայացնել Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները և բացահայտում է խորհրդային երկրի նախկին առաջնորդ Մ.Ս.Գորբաչովի դերը այդ հարցում:

Արցախյան հիմնահարցին անդրադարձել է Ա. Մամասյանը իր աշխատությունում<sup>38</sup>: Յեղիմակը փորձել է արցախյան հիմնահարցը դիտարկել իրավական հարթությունում: Նա ցույց է տալիս, որ ԽՍՀՄ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը դիտավորյալ չցանկացավ քաղաքական լուծում տալ արցախյան հիմնահարցին:

Թեմայի լուսաբանման համար կարևոր գիտական նշանակություն ունեն նաև «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անցյալը, ներկան և ապագան» խորագրով անցկացված միջազգային գիտաժողովի նյութերը<sup>39</sup>:

Հայտնի է, որ Անդրեյ Սախարովը արցախյան շարժման ակտիվ պաշտպաններից էր: Իր աշխատությունում հեղինակը փորձել է հիմնավորել արցախյան հիմնահարցի կարգավորման ճանապարհը ազգերի ինքնորոշման սկզբունքից ելնելով<sup>40</sup>:

Ուշագրավ է հայտնի խորհրդային քաղաքագետ Ֆ. Բուռլազկու «Ռուս ինքնակալները» աշխատությունը<sup>41</sup>: Նրանում հեղինակը փորձում է ներկայացնել Գորբաչովի քաղաքական գործունեությունը: Վեր է հանվում Գորբաչովի անընդունակությունը ազգային հարաբերություններում անհրաժեշտ նրբանկատություն չդրսևորելու, քաղաքական կառուցողական իմաստուն որոշումներ չկայացնելու վերաբերյալ:

Իր աշխատությունով Գորբաչովի գործունեությանն է անդրադարձել ռուս հրապարակախոս Մ. Գելլերը<sup>42</sup>: Նա մերկացրել է խորհրդային ղեկավարի վարած ազգային քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի հայության դեմ:

Կարևոր նշանակություն ունի նաև Տ.Ն. Քաուլի «Ստալինից մինչև Գորբաչով և հետո»<sup>43</sup> աշխատությունը: Մեծ կենսափորձ ունեցող հեղինակը

<sup>35</sup> Stu` Улубабян Г., Золян С., Аршакян А., Сумгаит...Геноцид...Гласность? Ереван, 1992. Арабян И., Геноцид и его наказуемость, Ереван, 1999.

<sup>36</sup> Stu` Чальян М., Освещение Арцахского движения в Армянской англоязычной прессе США. Ереван, 2006.

<sup>37</sup> Stu` Мартиросян Г., Горбачев и трагедия Нагорного Карабаха, Рязань, 2000.

<sup>38</sup> Stu` Манасян А., Карабахский конфликт. Ракурсы правового подхода, Ереван, 1998.

<sup>39</sup> Stu` Լեռնային Ղարաբաղի հանրապետության անցյալը, ներկան և ապագան: Միջազգային գիտաժողով: Երևան, 2007:

<sup>40</sup> Stu` Сахаров А., О Нагорном Карабахе, Ереван, 1996.

<sup>41</sup> Stu` Бурлацкий Ф., Русские государи, Москва, 1996.

<sup>42</sup> Stu` Геллер М., Седьмой секретарь. Блеск и нищета Михаила Горбачева, Лондон, 1991.

<sup>43</sup> Stu` Кауль Т., От Сталина до Горбачева и далее, Москва, 1991.

փորձել է ներկայացնել ԽՍՀՄ-ում Մ. Գորբաչովի կողմից իրականացվող քաղաքական համակարգի վերափոխման բարդ գործընթացը:

Հատուկ ուշադրության է արժանի Հայաստանում ԽՍՀՄ փլուզումից հետո, որպես Ռուսաստանի առաջին արտակարգ և լիազոր դեսպան Վ.Ստուպիշինի «Ղարաբաղյան հակամարտություն 1992-1994» և «Իմ առաքելությունը Հայաստանում 1992-1994 թթ. Ռուսաստանի դեսպանի հիշողությունները»<sup>44</sup> աշխատությունները:

Ռուս դիվանագետ Վ. Կազիմիրովը իր դիվանագիտական գործունեության մասին թողել է աշխատություն, որը կոչվում է «Խաղաղություն Ղարաբաղին: Ռուսաստանի միջնորդությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության գործում»<sup>45</sup>:

Հարկ է նշել, որ համացանցի միջոցով թեմայի լուսաբանման համար օգտագործվել են ժամանակակից պատմության հիմնադրամի նյութերը<sup>46</sup>:

Ադրբեջանում արցախյան հիմնահարցին նվիրված հրատարակվել են բազմաթիվ աշխատություններ<sup>47</sup>: Հավատարիմ լինելով բռնատիրական քաղաքականությանը այդ հեղինակներն, առանց որևէ բացառության, նենգափոխել են պատմական ճշմարտությունը: Նրանք ղեպքերն ու իրադարձությունները ներկայացրել են Ադրբեջանի համար շահեկան կտրվածքով:

### **ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլխից, որոնք բաժանվում են ենթագլուխների, վերջաբանից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ խոսվում է ատենախոսության թեմայի արդիականության, նպատակների ու խնդիրների մասին, ներկայացվում են աշխատանքի մեթոդաբանական հիմքը և գիտական նորույթը, թեմայի ժամանակագրական սահմանները, հիմնավորվում է աշխատանքի կիրառական նշանակությունը, տրվում է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

**Առաջին գլուխը` «ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ ԽՍՀՄ-ՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻՋՔԸ»,** բաղկացած է չորս ենթագլխից` «Մ.Գորբաչովի «վերակառուցման» քաղաքականությունը և էթնիկ-քաղաքական բախումների սկիզբը», «Սորոհրդային ղեկավարության կողմից արցախցիների օրինական պահանջին տրված քաղաքական սնանկ զնահատականը», «ԽՍՀՄ ղեկավարության խուսանավման քաղաքականությունը», «Կենտրոնի կողմից ազգային քաղաքականության հետագա ուղղվածության ճշտման փորձերը»:
